տիացոց համար գրեր հնարեց, բազմաթիւ դրպ-
ցոցներ բացեց և քրիստոնէութեան գործը դրեց
աւելի հաստատ հիմքերի վրայ։ Այս վանքը՝ իւր
հնութեամբ առաջինն է համարւում Ուտիացոց
աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր վանքերի և
սրբավայրերի շարքում, որ երկար ժամանակ Ա-
զուանից աշխարհի կաթողիկոսարանն է եղել։
Վանքի օդն ու ջուրը զով ու շատ առողջարար է,
իսկ տեղն ու դիրքը, իր առատ բուսականու-
թեամբ, Կովկասեան բարձր ու անտառապատ լեռ-
նաշղթաների հովանաւորութեամբ՝ ներկայացնում
է մի ակնապարար տեսարան։ Վանքի արևմտեան
կողմը լեռան կրծքին փռուած է Գիս Հայոց գիւ-
ղը, որ 18-րդ դարի վերջերում սարսափելի բրո-
նութեամբ մահմեդական դարձած է, որոնց բե-
բանում Գիս անունը փոխուել և դարձել է Քիշ,
իսկ Եղիշէ առաքեալի անունն էլ Եաղիշ կամ
Եախշի Առաքել։ Գիւղի ստորոտից փրփրադէզ և
կատաղի համանուն Գիս գետն է հոսում բար-
ձրից դէպի ցած, որ գարնանը լեռներում կուտա-
կուած ձիւնի հալուելու պատճառով սկսում է
սաստիկ յորդանալ և իւր ափերից դուրս գալով՝
ահագին վնասներ է հասցնում Նուխու այգինե-
բին և պարտէզներին։

Բ. ՃԱԼԷԹԻ ՎԱՆՔԸ։ Ճալէթ Հայաբնակ գիւ-
ղից վերև մի բարձր լեռնահարթի վրայ շինուած
են ս. Աստուածածնի անունով հին և նոր վան-
քերը, որոնցից առաջինը շինուած է շատ հին
ժամանակներում, իսկ վերջինը 19-րդ դարի կի-
սում։ Հին վանքը շինուած է նոյն իսկ ս. Եղիշէ